«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Մակդիր-որոշիչի նպատակային կիրառությունը Միսաք Մեծարենցի ստեղծագործություններում»

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ՝ Հասմիկ Հակի Թարփոշան

Դպրոց՝ Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան թիվ 177 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Թամարա Թովմասան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն.....3

Մ Ե Ծ Ա Ր Ե Ն Յ Ի Լ Ո Ւ Յ Մ Ը.....5

Ե Զ Ր Ա Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն.....13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....14

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20-րդ դարի սկիզբը արևմտահայ կյանքում եղավ ճակատագրական։ Դեռևս անցած դարի վերջերից սկսած ժողովրդի գլխավերևում «դամոկլյան սրի» պես կախված էր աղետի, ոչնչացման վտանգը։ Պարբերաբար իրականացվող տեղահանություններն ու կոտորածները ավելի էին սրում լարվածությունը։ Այդ գորշ մթնոլորտում դժվար էր անգամ կողմնորոշվել ու խորհել, թե վաղվա օրն ինչ կբերի իր հետ։ Շատ մտավորականներ տարագրվեցին, իսկ շատերը մնացին երկրում՝ հուսալով, որ վերջապես կգա պայծառ առավոտը կյանքի։ Եվ որքան էլ զարմանալի է ու տարօրինակ, դարասկզբին արևմտահայ գրականությունը աննախադեպ զարգացում ապրեց ու ղեկի, փարոսի դեր կատարեց ժողովրդի կյանքում։ Գրական ասպարեզում հանդես եկան գրողներ, ովքեր խորը հետք թողեցին մեր գրականության մեջ. Ատոմ Յարճանյան- Սիամանթո, Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան, Ռուբեն Սևակ, Երուխան, Գրիգոր Զոհրապ և Միսաք Մեծարենց։

Դարասկզբին հատկապես մեծ նվաճումների հասավ պոեզիան, որն արտահայտեց ժողովրդի տրամադրությունները, բերեց նոր թեմաներ և լույսի, հույսի շող եղավ խավարի ընդարմացման մեջ։

Սուլթանական ռեակցիայի մղձավանջային մթնոլորտում Մեծարենցի բանաստեղծությունները հնչեցին սրնգի ձայնի պես անուշ, հոգեթով ու սփոփող։ Համատարած անորոշության ու խավարի մեջ այն կարծես լույսի շող լիներ, որը տառապած ու վշտամորմոք հոգիներին տվեց ջերմություն ու ապրելու տենչ։ Անցել է ավելի քան հարյուր տարի, բայց նրա պոեզիան չի կորցրել իր ջերմությունն ու հմայքը և շարունակում է գերել ընթերցողին։

Գրականագիտության մեջ հաճախ են զուգահեռներ անցկացվել Մեծարենցի, Պետրոս Դուրյանի և Վահան Տերյանի միջև։ Դուրյանի հետ նրա անունը համադրվել է ստեղծագործական հանճարի վաղ ծաղկման և անձնական դժբախտ ճակատագրի առումով։ Իսկ արևմտահայ և արևելահայ պոեզիաների համաժամանակյա զուգահեռներում դնում են Մեծարենց և Տերյան անունները։ Բազմաթիվ նմանություններ են դիտվել նրանց ստեղծագործության մոտիվների, տրամադրությունների և գեղարվեստական մտածողության իմաստով։

Բայց Մեծարենցի ստեղծագործությունն ունի այնքա՛ն ինքնատիպություն, որին անշեղ կերպով ձգտել և որին այդքան շուտ է հասել պատանի բանաստեղծը։

Ստեղծագործելով ընդամենը 5-6 տարի և կյանքից հեռանալով գրեթե պատանի՝ Մեծարենցը դրսևորեց վիթխարի հնարավորություններ ու տաղանդ։ Նրա մտքի ու հոգու թռիչքը դեռ որքա՛ն գանձերով պիտի հարստացներ մեր պոեզիան, եթե չընդհատվեր կյանքը։

«Իմ մտահոգությունս, իմ մեծ ծարավս՝ իսկատիպ գրականության մը գաղափարին իրականացումն է», -իր նամակներից մեկում գրել է Մեծարենցը։ Թեև անհնարին լինելու չափ դժվար էր իրարամերժ հոսանքների մթնոլորտում ունենալ սեփական ուղին, բայց նա կարճ ժամանակամիջոցում անգամ կարողացավ ստեղծել իր յուրօրինակ արվեստը և բանաստեղծական կայուն սկզբունքներով իր հետքը թողնել ապագայի գրականության ուղու վրա։

Հանճարեղ պատանու ստեղծագործությունները հնարավոր չէ շփոթել այլ գրողների ստեղծագործությունների հետ։

Այնքա՜ն արև, ջերմություն ու մարդասիրություն կա նրա գործերում, որ թերևս կբավարարի՝ մարդկությանը շատ ու շատ դարեր։

Եկար գունատ ու տրտում,

Աղոթեցիր ու անցար...

...Եվ բուրումներ մնացին

Երիցուկի և ուրցի,

Ու ասես ցավն աշխարհում

Դարձավ աղոթք մի պայծառ,

Ու ասես մահն աշխարհում

Փոխվեց անմահ զրույցի...

Վահագն Դավթյան

ՄԵԾԱՐԵՆՑԻ ԼՈՒՅՍԸ

Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,

Ա՛րև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին։

Արյան և եղեռնի, համաշխարհային ընդհարումների օրերին մի հիվանդ պատանի, առանձնացած բնության մեջ հորինե՞լ է իր երգերը։

Միսաք Մեծարենցի ստեղծագործական տարիները հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության ամենամռայլ շրջաններից էին։ 90-ական թվականներին հայերի բնաջնջման քաղաքականությունը ավելի սանձարձակ բնույթ ստացավ. Սաստկացան հայկական արյունոտ ջարդերը։ Սակայն նման ծանր պայմաններում էլ արևմտահայ լավագույն գրողները սերտորեն կապված էին հայրենիքի հետ և իրենց ցասկոտ բողոքի ձայնն էին բարձրացնում բռնակալության ռեակցիայի դեմ։

Մեծարենցը այն գրողներից էր, ովքեր մնացին երկրում, դժոխային իրականության և հեղձուցիչ կյանքի մեջ։

Մ.Մեծարենցի՝ մեզ հասած բանաստեղծական ժառանգությունը կազմված է «Բաբախումներ», «Ծիածան» և «Նոր տաղեր» ժողովածուներից և տարբեր տարիներին գրված բանաստեղծություններից՝ հավաքված «Քերթվածներ» վերնագրի տակ։ Պատանի հանճարը գրել է նաև տասնյակի չափ արձակ բանաստեղծություններ, որոնք նրա պոեզիայի ուղղակի շարունակությունն են։

Խորհելով Մեծարենցի գրական ճանապարհի մասին՝ մտաբերում ենք հետևյալ տեսակետը. «Իսկական արվեստագետի ստեղծագործությունը ներքուստ միասնական է, քանի որ պայմանավորված է անհատականությամբ, աշխարհը տեսնելու նրա ուրույն տեսանկյունով, բայց մյուս կողմից՝ տաղանդի կերտած գեղարվեստական իրականությունը դինամիկ է, անընդհատ զարգացող ու հարստացող» (Է. Ջրբաշյան)։

Որո՞նք են այն հատկանիշները, որ բնորոշ են Մեծարենցի ստեղծագործությանը. թախծոտ, բայց միշտ սիրառատ հայացք աշխարհի և մարդու նկատմամբ, բնության գեղեցկությունների խորը զգացողություն, լիարժեք կյանքի կարոտ։

Մենավոր հոգիների տվայտանքն ու խռովքը, մահվան ու հիշատակի թախծոտ խոհերը, անարատ զգացմունքի հրճվանքն ու ջերմությունը, անպատասխան սիրո տառապանքները, բաժանված սրտերի ցավը, ահա պատանի բանաստեղծի հիմնական թեմաները։

Մեծարենցի բոլոր ստեղծագործությունները՝ թե՛ արձակ, թե՛ չափածո, հագեցած են գեղարվեստական պատկերավորման միջոցներով։ Այս պատկերները ինքնաբուխ հորդում են նրա հոգուց, մտքից և ստեղծում գեղարվեստական պատկերների մի լուսեղեն շատրվան։

Իր կյանքի վերջին ամիսներին մամուլում տպագրեց «Այս իրիկուն...» վերնագրով արձակ բանաստեղծությունը: Բանաստեղծը, քաղաքից դուրս գտնվող սոսի ծառի տակ նստած, հետևում է մարդկանց անցուդարձին՝ իրիկնամուտի ձայներով ու գույներով տարված:

Եվ այն պահին, երբ նրա միտքն ու հոգին ափեափ լցված էին տպավորություններով և ապրումներով, նա փորձում է գտնել այն բառերը, որոնցով պիտի արտահայտի իր ապրումները: փնտրում է «գունագեղ, անսահման բառը»: Բայց նա երկար չփնտրեց, որովհետև այդ բառը արդեն կար նրա գիտակցության մեջ, որովհետև նա այնքա՛ն ճիշտ ու լավ գիտեր այդ բառի զորությունը, ուժը:

«Ինքնադատության փորձ մը» հոդվածում նա խոսում է բանաստեղծի կոչման և բանաստեղծության դերի մասին. «Բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա, թե ոչ, բանաստեղծ չէ իրապես. քերթվածները իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լերան մշտանույն զորությունը»: Այս սկզբունքներով է առաջնորդվել Մեծարենցը իր լավագույն բանաստեղծությունները գրելիս: Բանաստեղծական պատկերները ուժեղացնելու նպատակով նա սովորական մակդիրների և համեմատությունների հետ միասին օգտագործել է նաև փոխաբերություններ՝ բառային փոխաբերություններ:

Օրինակ՝ «որբուկ երազներ», «ճերմակ գաղափար», «կախարդանքը թաց», «ծիրանի դարձ», «ձյունե ցնծություն», «մանուկ բույրեր», «ոստոստող հով», «լույսե արցունք», «սպասման հիվանդ» և այլն :

Լեզվի մեջ բառի (գոյականի) հատկանիշ ցույց տվող լրացումը, որը կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով, կոչվում է որոշիչ: Բայց երբ բառը բացի հատկանիշ արտահայտելուց, այսինքն բացի սովորական առօրեական իմաստից իր մեջ պարունակում է այլաբանություն կամ փոխաբերություն, այն կոչվում է մակդիր: Մակդիրն երևույթի այն հատկանիշն է բացահայտում, ինչն ուզում է շեշտել գրողը: Այս առումով մակդիրը հաճախ անվանում են գեղարվեստական որոշիչ: Մակդիրը ոչ միայն առարկայի, երևույթի գեղարվեստական բնութագիրն է, այլև արտահայտում է հեղինակի վերաբերմունքն ու գնահատականը, նաև հեղինակի հոգեվիճակը, զգայական աշխարհը:

Ի տարբերություն որոշիչի, որը դրվում է միայն գոյականների վրա, մակդիրը կարող է դրվել նաև բայերի վրա:

Մեծարենցի կիրառած պատկերավորման բազմազան միջոցները համապատասխանում են նրա քնարական հերոսի բնավորությանը՝ զգայուն, նրբանկատ ու նրբազգաց, մեղմ ու հանդարտ, բայց միաժամանակ լարված ու անհանգիստ:

Պատկերավոր մտածողության այս շքեղությունն իր ակունքներն ունի. նախ՝ հայ միջնադարյան գրականության, հատկապես Նարեկացու ստեղծագործությունները, որոնց Մեծարենցը վերաբերվել է աղոթքի պես։ Ակնհայտ է, որ նմանության եզրեր կան Նարեկացու լուսաշող ու բազմահնար պատկերների և մեծարենցյան փոխաբերությունների ու մակդիրների միջև։

Մյուս աղբյուրը սիմվոլիզմն է (խորհրդապաշտությունը), որի ազդեցությունը Մեծարենցի ստեղծագործությունների վրա անժխտելի է։ Այս առումով կարելի է նմանության եզրեր գտնել Մեծարենցի և Տերյանի միջև։

Սակայն եթե Վահան Տերյանի քնարական հերոսի համար ամենից գերադասելին մթնշաղն ու արևածագն են՝ լույսի և մութի խորհրդավոր խաղերով, ապա Մեծարենցն ամենից ավելի հակված է դեպի գիշերը։ Այս հակումը հատկապես ցայտուն է արտահայտվել «Ծիածան» ժողովածուի մեջ, որի բանաստեղծությունների մեծ մասը կապված են իրիկնային և գիշերային պատկերների հետ։ Հեղինակը դիմում է գիշերվա պատկերներին ոչ թե խավարով պարուրվելու, այլ «հիվանդ հոգին անդորրով պատմուճանելու» համար։

Գիշերը սիրելի է բանաստեղծի համար, քանի որ այն ինքնամոռացման, հոգևոր արբածության մի պահ է, երբ քնարական հերոսը ձուլվում է բնությանը, դառնում նրա մի մասնիկը։

Գիշերերգության մի չքնաղ պատկեր է «Ձմռան պարզ գիշեր» ստեղծագործությունը, որով բացվում է «Ծիածան» ժողովածուն։

Պարզ, լուսածածան, հրաշալի՛ գիշեր,

Հոսե՛ սրտիս մեջ դյութանքիդ ալիք,

Ճերմակ երազիդ ցայտքերեն մեղրիկ

Պուտ-պուտ կաթեցուր հոգվույս սիրաջեր։

Բանաստեղծը ընտրել է նուրբ երանգներ, ստեղծել շքեղ ու անսպասելի փոխաբերական պատկերներ փառաբանելու, սրբացնելու համար գիշերը. ձմեռային գիշերվա ճերմակ երազի ցայտքեր, շաղերի թաց կախարդանք, լուսածածան, հրաշալի գիշեր, ցնորաբեր գիշեր, միստիք ո՛վ անդորրություն։ Գիշերն ամենից առաջ մի սրբություն է, որն իրեն կարող է բերել մխիթարություն, մոռացնել տալ «աղի» հուշերը։ Բանաստեղծը ծնրադրում է գիշերվա առաջ՝ տենչալով անէանալ նրա մեջ.

Ցնորաբե՛ր գիշեր, ա՛հ, ընդունե՛ զիս,

Ընդունե՛, միստիք ով՛ անդորրություն...՝

Գիշերվա մի հոյակապ ձոն է «Սիրերգ» բանաստեղծությունը («Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին»)։ Գիշերը՝ «հաշիշով օծուն ու բալասանով», հարազատ ու սիրելի է բանաստեղծին, քանի որ ամեն կողմից գալիս են համբույրներ և ողջ բնությունը բռնկված է սիրով։ Գիշերվա մեջ բացվել է մի «լուսեղեն ճամփա», որը տանում է «ծփանուտ երազի ափունքին»։

Սակայն «ցնծագին գիշերվա» պատկերը միաձուլվում է մոտեցող մահվան ողբերգական սպասման և սիրո անհասանելիության գիտակցությանը։ Եվ ընթերցողին է փոխանցվում դրամատիկ մի ապրում-պատկեր՝

... Ցնծագին գիշերն է լույս ու լուսին՝

Բայց լույսն իմ հոգվույս քիչ- քիչ կը մաշի։

«Ցայգն է պայծառ» բանաստեղծության մեջ առկա է լույսի և լուսնի ցոլքը։ Լույսն այնքան է խտանում, որ ձեռք է բերում արևային պայծառություն և գիշերվա մեջ ասես ցոլարձակում է արևի դեմքը.

Գինով եմ ես ծաղկանց բույրեն Պիտի անցնիմ ես Անհունին

Տարաշխարհիկ ու գըրավիչ, հավերժալուռ երկինքներեն,

Ու ձայներն ալ՝ որ քիչ քիչ մինչև հույզերս ամեն թոշնին՝

իմ երազներս կօրորեն։ ու ես երկիր դառնամ նորեն։

Մռայլ իրականությունից հեռանալու և դեպի կյանք վերադառնալու, արեգակի ճառագայթների մեջ կենդանանալու մեծ տենչերը պատկերելու համար բանաստեղծն օգտագործում է հետևյալ մակդիրներն ու փոխաբերությունները. կարմիր կարոտ, բուստ համբույր, խոլապար ցոլցըլանք, տարաշխարհիկ ու գըրավիչ բույրեր, շեջ աշտարակներ իմ երազիս, գինով եմ ես ծաղկանց բույրեն, ձայներն ալ, որ քիչ-քիչ երազներըս կօրորեն։

Գիշերը լույսի և շողի որոնման ճանապարհ է, որ հանգեցնում է արևերգության Արևի գալուն նա սպասում է մի առանձին սիրով՝ տեսնելով նրա մեջ բոլոր իղձերի պսակումը.

«Եվ արևին կը սպասեմ ես ցնծապատար,

Միտքս երազով լեցուն համակ, ձեռքս՝ ծարավ... («Ձյունի ցնծություն»)։

Արևին նվիրված բանաստեղծությունները՝ «Այգերգ», «Ցայգն է պայծառ», «Արևին», «Տերևները կըսեին» աչքի են ընկնում կյանքը, լիարյուն և կենդանի կյանքը վայելելու խանդավառ ցանկությամբ, արեգակի ճառագայթների մեջ կենդանանալու, վերածնվելու տենչերով.

Պիտի ըմպե՛մ բոցն արևին, ճառագայթի՛ եմ ծարավի

պիտի ծըծեմ բույրն առտվան՝ հոգվույս համար՝ որ հիվանդ է,

հոգվույս համար՝ որ կերազեր զգվոտ ու մեղմշունչն հարավի,

պիտի ըմպե՛մ բոցն արևին, ճառագայթի եմ ծարավի։

Մեծարենցի «Արևին» ստեղծագործության մեջ բանաստեղծը դիմում է արևին՝ «Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվանդ եմ»։ Բանաստեղծը կարոտով է սպասում արևի «կիզանուտ համբույրին»։

1902-ին գրած «Իրիկվան դեմ» բանաստեղծության մեջ կան այսպիսի տողեր.

Հեշտ այգուն մոտ երազեցի, մըրափիս մեջ

Վառ գույներով դրասանգված երգը կյանքին,

Եվ դողդոջուն ծիածաններ մետաքսառէջ

Ու փաղփածոպ կ՛երկարեին աշխարհ մ՛անդին։

Հեշտ այգի - առաջին հայացքից անհամատեղելի բառեր, որոնք սակայն Մեծարենցի բառապաշարում վեր են ածվում խոսուն պատկերի։ Ինչո՞ւ հեշտ (հասանելի, պարզ) այգու մոտ երազեց կյանքի երգը։ Այդ երգն էլ հասարակ երգ չէր, այլ վառ գույներով դրասանգված։ Սրան հաջորդում է դողդոջուն ծիածանների պատկերը, որը ձգվում է մինչև անդին։ Այս հատվածում էլ երևում է գույնի ու ձայնի ներդաշնակությունն ու կապը։

Անսահմանափակ են մեծարենցյան խոսքի գեղանկարչության հնարավորությունները։ Եվ ինչու միայն գեղանկարչության. նրա շատ ստեղծագործություններին բնորոշ են շարժումն ու գույնը։ Եվ արդյունքում տեսնում ենք մի շարժանկար, որ կառուցված է բառերով։ Այս առումով անգերազանցելի է «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը։

Բուրումներով օծուն հովիկ, բուրյան երազ, սատափե մթնշաղ, լույսե ու տապե գինով աքասիաներ, անխոս հուրի դյութական, արծաթե վարսքեր, լույսե արցունք, ձյունող ծաղիկ, ծաղիկ-ծաղիկ կը կաթե ջուրը-այսպիսի մակդիրներով է հագեցած

տասնհինգ տողանոց բանաստեղծությունը: Ընթերցողն արբենում ու հարբում է լույսով ու տապով գինովցած ակացիաների տեսքով, բույրով, ձյունող ծաղիկների պարով: Խենթ պատանու պես հովը շտապում է խոլաբար գրկել այդ ծաղիկները, որոնցից ճառագող լույսն այդ շատրվանի ջրի ցայտքերի հետ իջնում է գուռի մեջ: Ջրի ցատքերը նա համեմատում է մանկան լուսե արցունքի հետ: Եվ հնչում է հրաշալի մեղեդու վերջին, մեղմ ակորդը. «Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե...»:

Եթե այս պատկերին նայենք բակունցյան հնագետի աչքերով, ապա կասենք՝ պարզ ու առերևույթ ոչնչով աչքի չընկնող բնապատկեր է: Ծաղկած ակացիայի տակ կա գուռ, որի մեջ թափվում է ջուրը: Քամին թափում ու քշում է ծաղկի թերթիկները, որոնք, խառնվելով ջրի կաթիլներին, թափվում են գուռի մեջ: Այս սովորական բնապատկերը վեր է ածվում գույների, շարժման ու երաժշտական մեղմ պատկերների ներդաշնակության: Անհնար է կարդալ այս բանաստեղծությունը և չզգալ, չտեսնել, չարբենալ: Իսկական խոսքի արվեստ, բարձր ու նուրբ ճաշակ, զգայուն ու նրբանկատ հոգի - այս ամենը միախառնված վեր են ածվել հրաշք բանաստեղծության: Եվս մեկ անգամ համոզվում ենք, որ մեծարենցյան մակդիրները խոսուն են, անկրկնելի:

Մեծարենցի ցանկացած ստեղծագործություն ունի պատկերավորման միջոցների առատություն: Եվ ամեն անգամ ավելի է համոզվում ընթերցողը, որ նրա բառը պատկերի արժեք ունի, իսկ պատկերը ապրում է մի ողջ զգայական հարուստ աշխարհ: Այս առումով լավագույն օրինակ է «Ուռիներու շուքին տակ» ստեղծագործությունը, որը բաղկացած է երեք մասից: Յուրաքանչյուր մասն ունի հինգ քառատող: Ամեն հնգատուն կարող էր համարվել առանձին բանաստեղծություն, եթե չլիներ ներքին կապը: Առաջին տողից մինչև վերջինը ձգվում է «թախծոտ օրհներգ»: Ուռիները խորհրդանշում են քնարական հերոսի շուրջը սփռված տխրությունը: Ահա թե ինչպիսի մակդիրներով են կառուցված պատկերները.հեղուկ նվագ, արոտներու զյումբյութ իրան, խուրձ ու տրցակ շողեր, անուրջի կույսեր, մանուշակե բլուրներ ու դաշտեր, հարսենի նազանք, մշուշով պատած նայվածքներ, համակ համբույր ու շուշան հոգի, հուր շրջմոլիկ ու բաղձիկ սիրտ, գորովակաթ արծաթե արցունք, գորշ ու տարփոտ շուք, արծաթի բամբիռներու ծիծաղ, չքնաղ անդորրություն, տարփագին, գինով ցոլք: Սրանք գոյականական մակդիրներ են, բայց կան նաև բայական մակդիրներ, որոնք քիչ են հանդիպում, թեև ավելի գեղեցիկ ու պատկերավոր են դարձնում խոսքը: Հոգին արծաթել, լուռն ուժգնորեն կը շեշտե, արբեցած խոնջենքե, կը ցանե կափկափն իր թոթով, արցունք ցողեցեք, թախծոտ օրհներգե սրսփալ, հոգին ոսկեզօծել, համբույրի պես փաթաթվել, համրագին կաթկթեցեք, խորհուրդն արծաթել, ջինջ հոգին ճանկե ...

Այս բառակապակցությունները այնքան տեսանելի են, որ նույնիսկ մեկնության կարիք չունեն:

Բառը ոչ միայն պատկեր է, այլև զգացմունք, մի ամբողջ աշխարհ:

Տառապող ու տանջահար հոգու ցնցող պատկերներ են «Մեղուները» և «Նավակները» ստեղծագործությունները։ Ինչպես Մեծարենցի շատ գործերում, այստեղ էլ կա այն անփարատ թախիծը, տխրությունը, որ ուղեկցում է նրան դեպի վերջին հանգրվանը։ Մի տեսակ և՛ տագնապ կա, և՛ ցավ, և՛ ափսոսանք, և՛ կարծես թե համակերպում։ Պատանին զգում է իր մոտալուտ վախճանը և հոգով փորձում է պատրաստ լինել դրան։ Իր տենչանքները համեմատում է տարագնացիկ մեղուների հետ, որոնք երամ-երամ գնում են հեռավոր ծաղկաստանները։ Սպասում է նա մեղուներին, այսինքն՝ իր տենչանքների իրականացմանը, սպասում է տագնապով ու հույսով, բայց մեղուները չեն վերադառնում և չեն բերում տենչանքների մեղրը.

Ալ հոգնա՛ծ եմ

Ըսպասելեն տենչանքներուս մեղրին անույշ ։

Նույն տրամադրությունն է արտահայտված «Նավակները» բանաստեղծության մեջ։

Նավակները խորհրդանշում են բանաստեղծի երազները, տենչերը։ Նրանք մեկնում են, հեռանում են «ծփանուտ Երազի ափունքեն»։ Մնում է միայն սպասել նրանց վերադարձին, այսինքն՝ իրականացմանը։ Դժվար ու ծանր է այդ սպասումը և բանաստեղծը գրում է. «Ըսպասման հիվանդ եմ»։

Այդ սպասումը ահա թե ինչպիսի մակդիրներով է բնորոշվում. բաղձանքով ակաղձուն, անձուկին բոցը, հոգեսարս դողերով և հուրքով, ծիրանի դարձ, դողահար, սրտաթափ ու խանդոտ երազ, հողմավար նավակներ, ջրանույշ պայիկներ, դյութավար նավակներ։

1907-ին Մեծարենցը հրատարակեց «Նոր տաղեր» ժողովածուն։ Այստեղ ընդգրկված բանաստեղծություններում՝ («Վայրկյան», «Զուրենդարձին», «Մառախուղ», «Զրտուք»), ներառված է նաև գեղջկական առօրյան և մարդը։ Գյուղաշխարհն ու բնությունը դառնում են նրա հոգու ցավի սպեղանին։ Այստեղ կարելի է լիաթոք շնչել ու ժպտալ արևի պես ջերմ ու պայծառ ։

Ահա մի քանի մակդիրակիր կապակցություններ, որոնք վկայում են, թե Մեծարենցն ինչպես է զգացել բնության գույները, շարժումը, երանգները. «մելամաղձիկ մառախուղներ», «խոնջ իրիկուն», «պատուհանեն կը խրկե ինձ հովիկն համբույրն իր մտերիմ», «լուսե արցունք մոմերու, որոնք հանդարտ կը մաշին», «տխուր է ծովն աշունի», «գիշերվան անտես ձեռքեր», «լույսի ծաղիկ թրթռուն», «ձյունի ցնծություն», «ոսկե արշալույսին կուսությունը» և այսպես շարունակ։

Բանաստեղծի բաղձանքն է ձուլվել բնությանը, դառնալ նրա մի մասնիկը՝ իրիկունը, հովը, հյուղը և այդպիսով օգտակար լինել մարդկանց։ Մահվանը մոտ կանգնած պատանին, որ ինքն ամենից շատ ուներ օգնության, սփոփանքի կարիք, իր

ողջ էությամբ ջանում էր օգտակար լինել մարդկանց՝ անշահախնդիր, անմնացորդ ու սիրով լի։

«Ըլլայի՛, ըլլայի՝» շարքը վկայումն է այդ նվիրումի։ Նա երազում է լինել Լույս, Ձև Երանգ, թրթռում, «կյանքի փաղփուն պատմուճանը ծիրանի», «կենսաբաղձիկ հոգվույն երազն անապատում», «Արևաշող ժըպիտ բանաստեղծի հոգիներուն մեջ մենիկ»։

Մեծարենցն իր պոեզիայով բերեց նոր ապրումներ, գեղագիտական անսովոր մտածողություն, պատկերակերտման բացառիկ արվեստ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական գրականությունը խոսքի արվեստ է։

Ի տարբերություն արվեստի մյուս ճյուղերի՝ գրականության հնարավորությունները ավելի լայն են ու բազմահնար։ Խոսքի միջոցով կարելի է արտահայտել և՛ ձայնի ու մեղեդու հմայքը, գույնի ներդաշնակությունն ու պատկերը, և՛ քանդակի կամ շինության գեղեցկությունը։

Գեղարվեստական խոսքին այդպիսի հնարավորություն տալիս են պատկերավորման միջոցները, որոնք տարբեր են ու բազմաբովանդակ։

Մեծարենցի ստեղծագործությունները հարուստ են պատկերավորման միջոցներով։

Պատանի հանճարը մարդկանց հայացքն ուղղում է դեպի գեղեցիկը, նրանց սովորեցնում է տեսնել, զգալ և գնահատել աշխարհը, գեղեցիկի անսահման զորությունը, ինչ օգնում է հոգեպես մաքրվել, ազնվանալ, սրբանալ։

Նրա ստեղծագործություններին բնորոշ է Թումանյանի խոսքը. «Արվեստը պետք է լինի աչքի նման պարզ, թափանցիկ և աչքի նման բարդ»։

Միսաք Մեծարենցը հարստացրեց մեր պոեզիան, գրականությունը և իր ստեղծագործություններով անմահացավ՝ ապրելով դարեդար։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ նոր գրականության պատմություն, 1979թ., Երևան-1979
2. Է. Ջրբաշյան - «Միսաք Մեծարենց», Երևան-1977 (Երևանի համալսարանական հրատարկչություն)
3. Ա. Շարուրյան - «Միսաք Մեծարենց», Երևանի պետական համալսարան, Երևան-1977